

ՅԵՏԱԶԳՈՒԱԾ ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Տեղի պակասը մեզ կը ստիպէ յաջորդ քիւ-
ւերուն յետաձգել Գէորգ Զուբարի վիպակին
վերջին մասը, «Մեք երէկն ու այսօրը» յոդ-
ուածաշարքին շարունակութիւնը եւ քանի մը
ուրիշ յոդուածներ, ինչպէս եւ ստացուած հը-
րատարակութեանց ցուցակը:

ՄԵՐ ՀԱՆԳԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Մեր նախորդ քիւով ծանուցած էինք քե-
հանգանակուած գումարով յանձնախումբը
լուսանկարչական գործիք մը՝ իր բոլոր պա-
րագաներով՝ զնա՞ծ էր ու «Հայաստանի կուլ-
տուրայի պատմութեան ինստիտուտ»ին դըր-
կած: Ստացանք հետեւեալ նամակը.

«Քաղաքացի Ա. Զօպանեան,

«Յարգելի քաղաքացի,

«Այսօր Հօկի միջոցով ստացանք ինստի-
տուտիս համար ուղարկուած լուսանկարչական
ապարատն իր բոլոր պարագաներով: Այդ նը-
ւերը մեծապէս կ'օժանդակի ինստիտուտիս՝ իր
գիտահետազօտական աշխատանքների ընթաց-
քում:

Ինստիտուտի գիրեկտոր ՅԱԿՈՅ. ԶՕՐԵԱՆ
Գրան. քարտուղար Յ. ՄԵԼԻՔ ԹՀԱՆՋԱՆԵԱՆ
Հանգանակութիւնը կը շարունակուի:

ԿՈՄԻՏԱՍԻ ՅՕԴՈՒԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

— 00 —

Մարքսի — Լենինիզմի ինստիտուտի յան-
ձնարարութեամբ ընկ. Ռուբէն Թերլեմեզեանը
կազմում եւ խմբագրում է Երաժշտապէս Կո-
միտայի յոդուածների, Երաժշտական հասա-
րակական արժէք ունեցող նամակների եւ ան-
տիպ ձեռագրերի ժողովածուն: Այդ ժողովա-
ծուն համար արամադրելի նիւթեր ունեցողնե-
րին խնդրում է ուղարկել հետեւեալ հասցէով՝
Երեւան, Ռատիօ — Կեդրոն, ընկեր Ռուբէն
Թերլեմեզեանին:

— 00 —

ՎՐԻՊԱԿ

Ա. Սաղըղեանի յոդուածին Երկրորդ մա-
սին մէջ (Անահիտ, Ե. տարի, թիւ 1) էջ 27,
պատկեր 1, Համիտիէ աղբիւրը, ուղղել Պահ-
նէ Քափուի աղբիւրը. էջ 28, ա. սխեմակ, տող
29, Ենիշէրի: Որպիսին, ուղղել՝ Ենիշէրի,
որպիսին. էջ 30, սխեմակ ք. տող 5, ջնջել՝
պատկեր 1: